ՍՈՎԵՏԱԿԱՆ ԱՍՏՂԱԲԱՇԽՆԵՐՈՒ ՆՈՐ ԳՅՈՒՏԵՐԸ

ԱԿԱԴԵՄԱԿԱՆ ՎԻՔԹՈՐ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Մոսկվայեն ՏԱՍՍ կհաղորդե թե Սովետական Միության Գիտությանց Ակադեմիային մեջ, Մայիս 19-ին տեղի ունեցած է միութենական խորհրդաժողով մը՝ նվիրված աստղերու տիեզերագործության խնդիրներու։ Խորհրդաժողովին կմասնակցին աստղաբաշխներ, բնագետներ, երկրաբնագետներ, և ուրիշ սովետական գիտության մարդեր։ Գլխավոր հաղորդագրությունը ըրավ ծանոթ աստղաբաշխ Վիքթոր Համբարձումյան, նախագահը Սովետական Հայաստանի Գիտությանց Ակադեմիային, նյութ ունենալով «Աստղերու ծագման ու զարգացման մասին»։

Սովետական աստղաբաշխները մեծ ուշադրություն կընծայեն տիեզերքի կազմվածքի ուսումնասիրության։ Սովետական Միության մեջ գոյություն ունին ամենակատարյալ գործիքներով օժտված հեռադիտակներ մեծ կեդրոններ, որոնք հնարավորություն ունին գիտության մարդոց՝ կարևոր հետազոտություններ ընելու աստղերու տիեզերագործության մարզին մեջ։

Սովետական աստղաբաշխներ գտան նոր օրենքներ, որոնք ցույց կուտան թե մեր օրերուն ևս կկազմվին նման աստղեր։

Սովետական Հայաստանի աստղաբաշխները փաստեր գտան ապացուցանող թե՝ աստղերը առանձին երևան չեն գար, այլ խմբակցության ձևով։ Այս գյուտը հետագային հաստատվեցավ և զարգացվեցավ ակադեմականներ Վասիլի Ֆեսենքովի, Կրիկորի Շլինի և այլ սովետական գիտության մարդոց երկերով։

Տիեզերքի շարունակական զարգացման կապակցությամբ իրենց եզրակացության մեջ, սովետական աստղաբաշխները ջախջախիչ հարվածներ տվին պուրժուա-իտեալիստ գիտուններու «տեսության», որոնք կփորձեն ապացուցանել թե՝ աշխարհը վերջ մը ունի, և թե մոլորակները ու աստղերը առաջ կուգան ոչինչեն, «առանց պատճառի»։